ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 13.06.2019թ. ԹԻՎ 455-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

30 հուլիսի 2019
ժամը 17:45

Հանձնաժողովի նախագահ
Ա. Ալավերդյան ՆԾ պետ
Հանձնաժողովի բացող անդամներ
Ա. Սայադյան ՆԾ ԱՆԿ ավագ ինժեներ
Գ. Սարգսյան ՆԾ ԱՆԿ ինժեներ
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Ս. Գյագունց ԿԾ պետ
Ա. Օհանյան ՕԵԿզ ԱՏԿ ղեկավար
Հանձնաժողովի քարտուղար
Հասմիկ Հակոբյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-02/19 ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակցի անվանումը
<<Park Air Systems Limited>>

Հանձնաժողովի նախագահ Ա. Ալավերդյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք առարկայի գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

h/h	Անվանում	<<Park Air Systems Limited>> եվրո	Նախահ. Գին
1	Ռադիոկայաններ	304 000	285 000 000

Մասնակիցը գնային առաջարկը ներկայացրել էր այլ արժույթով(եվրո): Հանձնաժողովը կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը հաշվարկեց հիմք ընդունելով սույն ընթացակարգի 8.5 կետը. Հայաստանի Հանրապետության դրամով՝ հայտերի բացման նիստի օրը արձանագրված ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով, որը կազմեց՝
304 000 եվրո – 161 226 400 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը որոշեց

1. ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի հայտը գնահատել բավարար:

2. ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել <<Park Air Systems Limited>>-ին:

3.Էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

4. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

բ. հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

2) ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը հանձնաժողովին ներկայացնում է իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել համաձայն սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի՝ մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացվելու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ժամը 11.00-ին <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա. Ալավերդյան

Ա. Սայադյան

Գ. Սարգսյան

Ս. Գյագունց

Ա. Օհանյան

Հ. Հակոբյան